

կու վայրկեան առաջ որոշեալ ժամէն. ոչ ոք տեղեակ էր իր ներքին հոգեբանութեան: Պիոս Ժ. հազիւ կը տեսնէ զինքը ժպտալին կ'ըսէ. «Կրնայի՞ր գանց ընել խոստովանանքդ Պապին գալէ առաջ: Ուրիշ անգամ երբ խոստովանանք կ'ըլլաս՝ քիչ մը աւելի հանդարտ եղի՛ր»:

Օր մը աղջնակ մը Վատիկանի մէջ Դրոշմ ընդունելու ատեն Ս. Պապի ձեռքէն՝ յանկարծ փղձկիկ կը սկսի. Պիոս Ժ. եւս յուզուած՝ պատճառը կը հարցնէ. աղջնակը լալալին կ'ըսէ որ իրեններէն ոչ մէկը կայ վրան մտածող: Մայրը ժամանակէ մը ի վեր դատուած էր ամուսնէն որ ուրիշ կընոջ մը հետ կը կենակցէր: Պիոս Ժ. հայրաբար կը քաջալերէ, կը մխիթարէ փոքրիկը ու կ'ըսէ. «Սիրտդ հանդարտ բռնէ, վասնզի երբ տուն դառնաս՝ պիտի գտնես հայրիկդ ալ, մայրիկդ ալ»: Իրօք տուն դարձին՝ ամէն բան ճիշտ էր. հայրն ու մայրը իրարու հետ հաշտուած կը սպասէին իրեն:

Ամէնուն ծանօթ է, որ առաջին Համաշխարհական Պատերազմն ալ դուշակուած էր իրմէ, որուն առաջին զոհը՝ կրնանք ըսել ինքը եղաւ: Երբ այդ մասին կ'անդրադարձնէր իր Պետական Քարտուղար Կարո. Մերրի տէ Վալը՝ սա կ'ըսէր թէ այդպիսի նշան մը չ'երեւիր, կամ թէ առ ժամս հետու է, ու թերեւս խուսափի եւս, մինչ Ս. Ծերունին ձեռքի հանդարտ շարժումով կը պնդէր. «Էմիլենցա, պիտի չանցնինք 1914-ը»: Այս իսկ պատճառաւ երբ 1912-ին վենետիկեցի հարուստ մը Կրատիսքայի մէջ կրօնաւորական հաստատութեան մը համար կ'առաջարկէր հող մը իր ընդարձակ շինութիւններով՝ «Կարելի չէ, կը պատասխանէր, վասնզի այդ շինութեան մէջ երբ բոլոր պիտի քանդուին»: Երեք տարի վերջ պատերազմի աւեր դարձած էին անոնք:

«Պապանները սկիզբն են մեծ պատերազմի մը՝ որմէ եւ պիտի չկրնամ խուսափիլ, որուն պիտի չկարենամ եւ տուկալ»: Այս մարդարէական խօսքերն ուղղած էր Ս. Աթոռի մօտ Պրադիկի Ներկայացուցիչին, երբ սա 1913-ին հրաժեշտ կ'անէր Իրմէ, ուրախակից ըլլալով որ այդ կերպով պիտի կարենար ազատիլ սարսափներէն զալիք պատերազմին՝ որ փոթորկելու վրայ է...:

Կարելի չէ առանց յիշատակութեան անցնիլ յատկապէս զմեզ հայերս հետաքրքրող եղելութիւն մը, նախատեսուած ու դուշակուած Եր. Պիոս Ժ. Ծայրագոյն Քահանայապետէն յանձին Տանն Կիլիկիոյ արժանաժառանգ Ն. Վսեմ. Կարո. Գրիգոր Ժ. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարքի:

Դէպքը տեղի ունեցած է 1908 Նոյեմբ. 1-ին Վատիկանու մէջ: «Ներկայ Կաթողիկոսը դեռ 13ամեայ Ղազարոս Աղանան էր կ'ըսէ «Բազմավէպ» - Լեւոնեան վարժարանի կղերիկոսներուն հետ ունկնդրութեան ընդունուած էր Պիոս Ժ. Քահանայապետին կողմէն, որ խօսելով իրենց՝ կը մաղթէր որ արժանանային քահանայութեան եւ եպիսկոպոսութեան»:

«Սրբ. Քահանայապետն անդրադառնալով Աղանանեանի ժպիտը այդ մաղթանքին վրայ՝ ըսած էր. կը ծիծաղի՞ս. շատ լաւ, քեզի կը մաղթեմ որ ոչ միայն եպիսկոպոս, այլ նաեւ Պատրիարք (Կաթողիկոս) ըլլաս»¹⁰:

Եր. Պիոս Ժ. ի այս կանխադուշակութիւնը աննշմար չէր անցած այժմեան Գաւակալ Սրբ. Պիոս Ժ. Քահանայապետէն, երբ առ մերս Նորընտիր Հոգեւոր Տիրոջ Պալլիում շնորհելու առթիւ կ'ուղղէր իր հայրական մաղթանքները, ինչ որ նոյն ատեն արձագանգ դտաւ Հռովմայ մամուլին մէջ:

Այդ իրականութիւնը յետոյ ժամանակի ընթացքին աւելի եւս ճոխացաւ, երբ Ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծիրանեփառ Իշխաններու կարգին արժանապէս դասեց Ն. Սրբութիւնը մերս նախադուշակուած Հոգեւոր Տէրը:

Այս նախատեսուած իրականութիւնը կու գայ կազմելու մեր վերոյիշեալ պատմական բոլոր դուշակութիւններուն հետ Երանելի Պիոս Ժ. ի հոգեկան լուսաշող անկունքներէն մին:

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

¹⁰ Դեկտեմբեր 1937, էջ 296. - Այս միջնորդ դէպքը յիշատակուած է Հռովմայ Լեւոնեան վարժարանի Օրագրութեան մէջ (տես «Մատիս» 1951, Յուլիս 6, էջ 8):

ՔԵՐԹՈՂԻՆ ԱՐՁԱՆԸ

Զախ ձեռքը վեհ ֆակտին,
Ըստուերներուն տակ ծառերուն սխրագին,
Քերթողն՝ հակած կը մտածէ.
Խորհուրդներու ովկեանի մը մէջ բոցէ
Նաւարկելով մի՛ գուցէ...:

Քերթողը հէ՛մ տըխու՛ր է,
Այ ձեռքն առած՝ իր գրքիչը փետուրէ,
Ինք կը խորհի, մինչ կ'անցնին
Քովէն գոյգեր՝ ոստոստելով ժպտագին,
Անհո՛գ, անփոյթ իր վիշտին...:

Արեւմար՝ շողակա՛ր
Վերջալոյսին ցոլքերն ոսկի եւ արծաթ,
Բըռնկած են գլխուն վրայ
Որպէս դափնի, որպէս պըսակ շափիւղայ,
Մինչ քերթողը կը խոկայ:

Գիշե՛ր՝ աստղերն բարձրէն լուրբ
Դալուկ այտերն կը համբուրեն ժպտաշուրբ,
Բայց քերթողն է մի՛շտ անփուն.
Լուսինն իջած է իր դէմքին վրայ խոհուն
Մինչ կը դիտէ սեւեռուն...:

Սիւզ մը կ'անցնի փափկօրէն
Զերբ սարսու՛ռ, հե՛ւք, քերթողին վսեմ հոգիէն,
Իր գլխուն վրայ քանկագին՝
Որպէս դափնի, ծաղիկ տերեւ կը քափին
Մինչ կը սպասէ անմեկին...:

Թոշուններն իր մօտ իջեր
Կը նուազեն, կը դալալայեն փայտաշեր,
Կարծես սիրով կը հեղուն՝
Դեռ քերթողին չաւարտած կոյս տաղերուն
Արձագանգները բըրբուն...:

ՀՐԱՅԱՅՏ

Ս. ՓՕԼ.